# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-14/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանումների մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է
գնահատող հանձնաժողովի 19.03.2014 թ. թիվ 4 որոշմամբ:
Հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-14/1**

Պատվիրատուն՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, նորք, Հովսեփյան 95հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀՌՑ-ԲԸՀԱՊՁԲ-14/1 ծածկագրով հայտարարված ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ այլ պարզաբանումները:

**Հարցադրում** 1

1. Կոնկրետ ինչ սարքավորման համար են նախատեսված մետաղական խցիկները? որն է այդ սարքավորման արտադրող ընկերությունը?
2. Մետաղական խցիկները նկարներ կամ արտաքին տեսքի պատկեր կարող եք տրամադրել, գոնե էլեկտրոնային տարբերակով:
3. Ճիշտ ենք հասկացել, որ մետաղական խցիկների մրցույթի հայտի ներկայացման վերջնաժամկետը մարտի 24-ն է, ժամը 15:00?

**Հարցադրման ստացման ամսաթիվ՝** 17.03.2014

**Պարզաբանում** 1

1. Մետաղական խցիկները նախատեսված են հեռահաղորդակցական սարքավորումների տեղադրման համար: Սարքավորումներ արտադրող ֆիրման էական չէ:
Տեխնիկական բնութագրով տրված են խցիկների չափսերը, սարքավորումների ջերմատվությունը և խցիկի մոդելի ընտրության համար անհրաժեշտ այլ պարամետրեր:
2. Խցիկների նկարներ չենք կարող տրամադրել:
3. Մետաղական խցիկների մրցույթի հայտի ներկայացման վերջնաժամկետն է՝ մարտի 24-ն է, ժամը 12:00-ն:

**Հարցադրում** 2

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.3. դ ) գնման առարկայի բնութագրերը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակելու դեպքում գնման հայտով նախատեսված՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ առնչվելու իրավունքը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները)

**Հարցադրման ստացման ամսաթիվ՝** 19.03.2014

**Պարզաբանում** 2

Գնման առարկայի բնութագրերը պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք չեն պարունակում, ուստի վերջինիս հետ առնչվող փաստաթղթեր /տեղեկություններ/ չեն ներկայացվում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝Մ. Նիկոլյանին:
Հեռախոս՝ /010/ 65 40 73:
Էլ. փոստ՝ hhrc.gnumner@tna.am:

*Պատվիրատու՝«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց« ՓԲԸ*